



ՀԱՎԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-6

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-6

YEREVAN
IAE PUBLICATION 2024
ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ 2024

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ - 6

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

ԵՐԵՒԱՆ
ՀԱԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

*Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS RA*

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավերիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյոթ Թրախնա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնապետեան, Պիյեր Բատի

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 6-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, Սիրակուզայի համալսարանի (ԱՄՆ) հետազոտողների հոդվածները, որոնց նախնական տարբերակները որպես գեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023 թ. հոկտեմբերի 18-19-ին ՀԱԻ Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի կազմակերպած «Համաշխարհայնացումը և սոցիալ-մշակութային արդի գործընթացները Հայաստանում. հիմնախնդիրներ և հեռանկարներ» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է մեկ հաղորդմամբ և Բեյրութում հրատարակվող Հայկազեան հայագիտական հանդեսի երկու համարների գրախոսությամբ:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

7

Միհրան Գալստյան

Մնալ, թե՛ գնալ. Հայաստանից հնարավոր նոր արտագաղթի սոցիալ-մշակութային հիմնախնդրի շուրջ

8

Լուսինե Տանաջյան

Հայ և այլազգի ներգաղթյալների ինտեգրումը Հայաստանում. համեմատական կողմեր

24

Սոնա Ներսիսյան

Հայաստանը ռուսաստանցի ներգաղթյալների ընկալումներում

37

Սյուզաննա Բաբսեղյան

Հայաստանի հայրենադարձության քաղաքականության հիմնահարցերն արդի իրողությունների համատեքստում

49

II. ՆԵՐԳԱՐԹՅԱԼՆԵՐ ԵՒ ՏԵՂԱՅԱՆՎԱԾՆԵՐ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏԸ

65

Գայանե Հակոբյան

«Հալեալի շուկան»՝ որպես սիրիահայերի ձեռնարկատիրական գործունեության միկրոմոդել

66

Գարիկ Աթանեսյան

Առտնետիկության խոսույթը և բեմադրված ժառանգությունը հետխորհրդային Հայաստանի զբոսաշրջային պրակտիկաներում

78

Արմինե Տիգրանյան

Ադրբեջանի կողմից բռնի տեղահանված արցախահայերի մշակութային կյանքին մասնակցության սահմանափակումները (Արցախի Հաղթութի շրջանի օրինակով)

89

III. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ

113

Ռուբեն Օհանջանյան

Պրոֆեսիոնալ մշակութային արժեքների փոփոխման որոշ հարցեր ՀՀ-ում գլոբալիզացիայի համատեքստում

114

Լուսինե Անգելուշ

Հայաստանի Հանրապետության լեզվական քաղաքականությունն արդի շրջանում

124

Մակիչ Վարդանյան

Գլոբալացման խոսույթը հայաստանյան զլմ-ներում. կրթության հիմնախնդրի համատեքստը

139

IV. ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ԱՐԴԻԱԿԱՆԸ	
ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐՈՒՄ	157
<i>Սվերլյանա Պողոսյան</i>	
Հագուստը որպես խորհրդահայ և ետխորհրդահայ հասարակության սոցիալ-հոգեբանական ցուցիչ	158
<i>Հասմիկ Աբրահամյան</i>	
<i>Ռոման Հովսեփյան</i>	
Ուտեստի էթնոմշակութային դերը միգրացիայի շրջապատւոյտում (նախնական հետազոտություն՝ ըստ Սյունիքից գրառված նյութերի)	174
V. ՍՓՅՈՒՌՔՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ	189
<i>Ռուբեն Կարապետյան</i>	
Սփյուռքի համայնքային կառույցներում հայերի ներգրավվածության խնդիրը	190
<i>Նարե Գալստյան</i>	
Հայրենիքի մասին պատկերացումները Լոս-Անջելեսի հայկական համայնքում	204
<i>Նելլի Խաչատրյան</i>	
<i>Սալվինե Մարկոսյան</i>	
<i>Մարիամ Հարությունյան</i>	
Էթնոկրոնական վերափոխարկումը համաշխարհայնացման համատեքստում (հնդկական, թուրքական և իռլանդական սփյուռքների փորձի հիման վրա)	218
VI. ՀԱՂՈՐԴՈՒՄ	237
<i>Հռիփսիմե Ասատրյան</i>	
Մանկական բանահյուսության որոշ արդի դրսևորումներ	238
VII. ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ	247
Հայկազեան հայագիտական հանդեսի 2022 տարւոան զոյգ գիրքերը	248
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ	263

I

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՑՈՒՄ ԵՒ ՄԻԳՐԱՑԻՈՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

Լուսինե Տանասյան, պ.գ.թ.
ՀԱԻ

ՀԱՅ ԵՒ ԱՅԼԱԶԳԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԿՈՂՄԵՐ

Ժամանակակից աշխարհում անընդհատ թափ առնող *միգրացիաները* հյուրընկալող երկրներում հանգեցնում են նոր համայնքների կազմավորման՝ առաջ բերելով նոր գործընթացներ հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Ներգաղթյալների (*միգրանտների*) արդյունավետ *ինտեգրումը* նախանշում է, որ այդ համայնքները կարող են ներդաշնակ գոյակցել ընդունող հասարակությունում՝ խթանելով սոցիալական համերաշխությունը և նվազագույնի հասցնելով մշակութային տարբերություններից բխող հնարավոր հակամարտությունները: Այս համատեքստում ներգաղթյալների *ինտեգրման* հիմնահարցը թե՛ քաղաքականության և թե՛ գիտահետազոտական դաշտում մշտապես արդիական է: Դրա մասին են վկայում նաև թեմայի վերաբերյալ առկա և դեռևս առաջացող տեսական ու հետազոտական վերլուծությունները:

Հոդվածի նպատակն է՝ ցույց տալ այլազգի և հայ ներգաղթյալների *ինտեգրման* որոշ առանձնահատկություններ՝ հիմնվելով տեսական գրականության վերլուծության և «Այլազգի ներգաղթյալների սոցիալական *ինտեգրման* փորձառությունը Հայաստանում. իրավիճակ և զարգացումներ» ծրագրի¹ նախնական փուլի հետազոտական նյութերի վրա: Քննարկվում են նաև *ինտեգրման* հայեցակարգի վերաբերյալ առկա մոտեցումները, ՌԴ-ից դեպի ՀՀ ներգաղթյալների ունեցած խնդիրներն ու խոչընդոտները, հարմարման ընթացքն ու Հայաստանի՝ որպես ընդունող երկրի վերաբերյալ առկա պատկերացումները ներգաղթյալների շրջանում: Հետազոտական նյութերի հավաքման նպատակով կիրառվել են փաստաթղթերի վերլուծության, խորին և փորձագիտական հարցազրույցների մեթոդները:

Հիմնաբառեր՝ ներգաղթ, արտագաղթ, ինտեգրում, հարմարում, այլազգի, ռուսաստանցի ներգաղթյալ, միգրացիա:

Ներածություն. գրականության ակնարկ

Ներգաղթյալների *ինտեգրման* ուսումնասիրությունները բազմաչափ են՝ ներառյալ տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական հարթությունները: *Ինտեգրման* առանձնահատուկ կողմերի բացահայտման համար հետազոտողները դիմում են մի շարք տեսությունների՝ ձուլման, հարմարման, *ակուլտուրացիայի*, մշակութային մոդելների փոխազդեցության ու անդրազգայնականությանն:

Մի շարք տեսություններ փորձում են բացատրել ներգաղթյալների

1 Ուսումնասիրությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 22YR-6A037 ծածկագրով գիտական նախագծի շրջանակում:

ինտելեգրումը և դրան առնչվող սոցիալական գործընթացները: Ինչպես օրինակ՝ ձուլման տեսությունը² ընդգծում է ներգաղթյալների *ինտելեգրման* տարբեր ուղիները՝ սկսած վերընթաց շարժունությունից և ձուլումից մինչև սոցիալական բացառում և *մարգինալացում*: Սոցիալական կապիտալի տեսությունն ընդգծում է սոցիալական ցանցերի, դրանց ներուժի և ռեսուրսների կարևորությունը *ինտելեգրման* գործընթացների անցնցում, այսպես ասած՝ հեշտ իրագործման նպատակով³:

Ներգաղթյալների *ինտելեգրումը* բարդ գործընթաց է, որի վրա ազդում են տարբեր գործոններ՝ ներառյալ ներգաղթի քաղաքականությունը, մուտքի երկրի սոցիալ-տնտեսական պայմանները, մշակութային շարժընթացը և անհատական փորձը: *Ինտելեգրումը* հաճախ ընկալվում է որպես *միգրանտների* աստիճանական և բազմակողմանի ներգրավում իրենց ընդունող հասարակությունների սոցիալական, տնտեսական և մշակութային կառուցվածքներում ու ինստիտուտներում⁴:

Ներգաղթյալների *ինտելեգրման* վերաբերյալ գիտական գրականության մեջ ցցուն են մի քանի քննարկվող ասպեկտներ: Նախ՝ ընդունող երկրներում նրանց տեղավորման քաղաքականություններն են, որոնք տարբեր երկրներում տարբեր են և արտահայտում են բազմազանությունը կառավարելու և սոցիալական համախմբվածությունը խթանելու տարբեր մոտեցումներ: Այս համատեքստում Յոպկեն քննարկում է բազմամշակութայնության, ձուլման և միջմշակութայնության հակադրվող մոդելները, որոնք ընդունել են արևմտյան հասարակությունները⁵:

Միգրացիայի կարգավորման փորձը տարբեր երկրներում ընթանում է երկու ուղղությամբ՝ ներգաղթյալների ձուլում և մշակույթների համակեցություն: Առաջին դեպքում ընդունող երկիրը վարում է տեղացիների և ներգաղթյալների միջև մշակութային տարբերությունները առավելագույնս նվազեցնելու և վերացնելու քաղաքականություն: Նմանատիպ երկրներում իրականացվում է ներգաղթյալների «ցրում» ողջ երկրի տարածքով, առաջնային է դառնում տվյալ երկրի հիմնական լեզվին տիրապետելը, պետք է սովորել այդ երկրի պատմությունը, երբեմն ներգաղթյալներին նաև արգելվում է ի ցույց դնել իրենց ազգությունը ևն: Երկրորդ դեպքում կատարվում է հակառակ գործընթացը՝ խրախուսվում և ընդունելի է համարվում մշակութային բազմազանությունը: Երկու դեպքում էլ պետությունները ոչ միայն հայտարարում են ներգաղթի քաղաքականության մոդելի մասին, այլև ձևավորում են համապատասխան ենթակառուցվածքներ՝ այն իրականացնելու համար, մշակում են օրենսդրական հիմքեր, ձևավորում են ներգաղթի հոսքը և հետագա *ինտելեգրման* գործընթացները կարգավորող հաստատություններ, կենտրոններ ևն⁶:

2 Alba, Nee 1997.

3 Putnam 2000, 20-45.

4 Berry 1997; Portes, Rumbaut 2001, 50-67.

5 Joppke 2007, 5-10.

6 Տանաջյան Լ.Ա., Միրիահայերի ինտեգրման փորձառությունը Հայաստանում. խնդիրների հաղթահարման մեխանիզմները.

<https://www.osf.am/hy/programs-hy/policy-fellowship-initiative-hy/list-of-completed-projects-hy/>

Ուսումնասիրության հաջորդ հիմնարար հարցերը *միգրանտների* փորձառությունը, խնդիրներն ու դրանց լուծման ուղիներն են: Հիմնվելով տարբեր տեսությունների վրա՝ կարող ենք ասել, որ *միգրանտների ինտեգրումը* հարմարման գործընթացի վերջնական փուլն է: Ոլորտում առկա տեսական և հետազոտական շրջանակներում հիմնական մոտեցումն այն է, որ ներգաղթյալները էականորեն տարբերվում են հյուրընկալող հասարակությունից իրենց մշակույթով, կրոնական, լեզվական գործելակերպերով, վարքագծով ու ավանդույթներով: Նշվածի հիման վրա կարող ենք բնութագրել *ինտեգրումը* (համարկում)՝ որպես երկարատև բարդ ու բազմաշերտ երևույթ, որը պետք է տեղի ունենա տարբեր մակարդակներում: Այս առումով տեսաբաններն առաջարկում են *ինտեգրումը* քննարկել իրավական, քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային, կրոնական և այլ մակարդակներում: Սակայն նշված բաղադրիչներն առավել հաճախ հանդես են գալիս համակցված ձևով և անքակտելիորեն փոխադասմանավորված են⁷:

Գիտական ու հետազոտական դաշտում հաճախ քննարկվում են ընդունող երկրներում ներգաղթյալների *ինտեգրման* հետևանքները, որոնք տարածվում են հասարակության տարբեր ոլորտների վրա՝ ներառյալ կրթական, առողջապահական, սոցիալական, աշխատանքային և այլ ոլորտներ: Ալբան և Նին վերլուծում են ԱՄՆ-ում ձուլման և էթնիկ շերտավորման օրինաչափությունները՝ ընդգծելով սոցիալական ինստիտուտների և կառուցվածքային խոչընդոտների դերը *ինտեգրման* հետագծերի ձևավորման գործում⁸: Դուստմանը և Ֆրատտինին ուսումնասիրում են ներգաղթյալների՝ աշխատաշուկայում ներառվածությունը Եվրոպայում՝ ընդգծելով մարդկային կապիտալի, լեզվի իմացության և խտրականության կարևորությունը զբաղվածության հեռանկարները որոշակիացնելու հարցում⁹:

Ներգաղթյալների *ինտեգրումը* ուղեկցվում է խոչընդոտներով ու մարտահրավերներով՝ ներառյալ իրավական սահմանափակումները, լեզվական սահմանափակումները, ազգային կամ այլ հիմքով խտրականությունը և սոցիալ-տնտեսական անհավասարությունը: Ինչպես, օրինակ՝ «Everyday Racism: Reports from Women of Two Cultures» գրքում ներկայացվում է էթնիկ փոքրամասնությունների փորձը՝ ընդգծելով ռասիզմի և բացառման ազդեցությունը նրանց պատկանելության և ինքնության զգացողության վրա¹⁰: Բլոմրաադը ուսումնասիրում է ներգաղթյալների քաղաքական ընդգրկումը Կանադայում և Միացյալ Նահանգներում՝ կենտրոնանալով քաղաքական մասնակցության և ներկայացուցչության խոչընդոտների վրա, որոնց բախվում են մարգինալացված *միգրանտների* խմբերը¹¹: Ներգաղթյալների *ինտեգրումը* հետևանքներ ունի սոցիալական համախմբվածության, ինքնության ձևավորման և ընդունող

7 Տաևաջյան Լ.Ա., Սիրիահայերի ինտեգրման փորձառությունը Հայաստանում. խնդիրների հաղթահարման մեխանիզմները. <https://www.osf.am/hy/programs-hy/policy-fellowship-initiative-hy/list-of-completed-projects-hy/>

8 Alba, Nee 1997.

9 Dustmann, Frattini 2014, 598-600.

10 Essed 1990.

11 Bloemraad 2006.

հասարակությունների միջխմբային հարաբերությունների վրա: Այս համատեքստում Քապսը և ուրիշներ քննարկում են համաշխարհայնացման դարաշրջանում բազմազանության կառավարման մարտահրավերները՝ ընդգծելով ներառական քաղաքականության և միջմշակութային երկխոսության կարևորությունը¹²:

Ներգաղթյալների *ինսրեգրումը* բազմակողմ գործընթաց է, որը ձևավորվում է անհատական, կառուցվածքային և համատեքստային գործոնների բարդ փոխազդեցությամբ: *Ինսրեգրման* վերաբերյալ հետազոտությունները զարգացրել են տեսական ըմբռնումը և քաղաքական բանավեճերը բազմազանության կառավարման և սոցիալական համախմբվածության խթանման վերաբերյալ տարբեր տիպի հասարակություններում: Այս առումով, *ինսրեգրումը* դիտարկվում է որպես երկկողմանի գործընթաց: Դրանում ներգրավված կողմերը՝ ներգաղթյալները և ընդունող երկրի քաղաքացիները, ունեն հավասար մասնակցություն: Կախված նրանից, թե ներգաղթյալները որքան հաջող և սահուն կներառվեն ընդունող հասարակություն, այդքան ավելի հարթ կընթանա նաև ընդունող երկրի սոցիալական, տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքը: Արդյունավետ *ինսրեգրում* իրականացնելու համար պետությունները մշակում են ներգաղթի հատուկ ռազմավարություններ և քաղաքականություններ՝ բազմաստիճան քայլերով:

ՀՀ-ի ներգաղթի փորձառություններ

Առկա հայեցակարգերն ու փորձառությունները հնարավորություն են տալիս ուսումնասիրելու ներգաղթյալների *ինսրեգրման* միջազգային մոտեցումները և ծրագրերը: Սակայն մշակութային ու կառուցվածքային (սոցիալ-տնտեսական) հարմարման կամ ձուլման ընդհանրական ըմբռնման շրջանակներում ի հայտ են գալիս ներգաղթյալների *ինսրեգրման* մի շարք առանձնահատկություններ:

ՀՀ *միգրացիոն* քաղաքականության մեջ առավել մեծ տեղ են գրավում արտագաղթի վերաբերյալ պետական որոշումներն ու քաղաքականությունները՝ պայմանավորված արտագաղթի շարունակականությամբ: Սակայն *միգրացիոն* և սփյուռքի քաղաքականությունները հայտարարել են նաև ներգաղթին և հայրենադարձությանը նպաստող քաղաքականության որդեգրման մասին: Չնայած դրան՝ *միգրացիոն* քաղաքականության *դիսկուրսը*, հաճախ կենտրոնանալով Հայաստանից արտագաղթի մարտահրավերների վերլուծության վրա, իր շրջանակներից դուրս է թողնում ներգաղթի և դրա հնարավոր հետևանքների քննարկումը:

Հարկ է նշել, որ վերջին հարյուրամյակում Հայաստանում տեղի ունեցող տարբեր խմբերի ներհոսքը առաջ է բերել այդ խմբերի ընդունման, տեղավորման և *ինսրեգրման* յուրահատուկ փորձի կուտակում: Այդ խմբերից յուրաքանչյուրն իր *ինսրեգրում*ն անցել է տարաբնույթ ձևով՝ առանց պետության հատուկ քաղաքականության: Դրա մասին են փաստում այդ խմբերի հետագա *միգրացիոն* շարժունակության վերաբերյալ տվյալները¹³:

12 Castles, Miller 2009.

13 Հայրենադարձների ինտեգրման խնդիրները հայրենիքում (սիրիահայերի օրինակով). https://msrf.aua.am/files/2020/04/Final_Report.pdf

Ներգաղթի անցյալի փորձառությունը և ներկայիս շարունակական հոսքերը դեպի Հայաստան անհրաժեշտ են դարձնում տարբեր խմբերին Հայաստանում ընդունման, տեղավորման և *ինտեգրման* ուսումնասիրությունն ու դրանց վերհանումը սոցիալական գիտություններում:

Հայաստանում ներգաղթյալների *ինտեգրման* գործընթացների ուսումնասիրության համար անհրաժեշտ է առաջին հերթին հաշվի առնել այդ գործընթացի էթնոսոցիալական համատեքստը: Հայաստանը պատմականորեն բնութագրվում է բնակչության ակտիվ հոսքով, որը բուռն արձագանք է գտնում մշտական բնակչության շրջանում և հանգեցնում սոցիալական բարդ գործընթացների: Արդյունքում այն կարող է բազմազանեցնել, հարստացնել ու ամրապնդել սոցիալական միջավայրը, բայց և միաժամանակ կարող է բերել անհանդուրժողականության ու *կոնֆլիկտների*¹⁴ խարխիլելով սոցիալական կառուցվածքը: Հայաստանի տարածքում այդպիսի հոսքերը եղել են և խոշոր ալիքների, և՛ մշտաժողով շարժի ձևերով: Միայն վերջին հարյուրամյակում նմանատիպ օրինակներ են դեպի Հայաստան հայրենադարձության հոսքերը, աղետների ու պատերազմների հետևանքով կամ բռնի տեղահանվածների ներգաղթի հոսքերը, ինչպես նաև տեղափոխության ու վերաբնակության փոքրածավալ, բայց հոսուն ներգաղթը, որը շարունակվում է մինչև մեր օրերը:

Հայաստանյան հետազոտական դաշտում մշտապես թիրախավորվել են հայ *միգրանտները*, քանի որ այս հոսքերի մեջ գերակշիռ մեծամասնությունը հայազգի ներկայացուցիչներն են: Հարկ կա անդրադառնալու նաև այն հանգամանքին, որ հայերի ներգաղթը դեպի Հայաստան չի ընկալվում և չի գնահատվում միանշանակորեն: Այն ներկայացվում է տարբեր դիտանկյուններով՝ և՛ գիտական հանրության, և՛ ներգաղթյալների և ընդունող երկրի կողմից, այսինքն՝ պետության, ինչպես նաև Սփյուռքի և միջազգային հանրության կողմից: Հայաստանյան և սփյուռքյան խոսույթներում էթնիկ հայերի ներգաղթը դիտարկվում է որպես հայրենադարձություն՝ պայմանավորված Հայաստանի ներգաղթի պատմությամբ, Սփյուռքի առկայությամբ և էթնիկ պատկանելության հիման վրա ներգաղթի քաղաքականությամբ, ինչպես նաև հայրենադարձության քաղաքականության մասին պարբերաբար այժմեականացվող քննարկումներով¹⁴: Վերջին հարյուրամյակի ընթացքում Հայաստան ներգաղթած հայերի տարբեր խմբեր թելադրեցին իրենց փորձի ուսումնասիրության կարևորությունը և անհրաժեշտությունը: Այդ ընթացքում անընդհատ տեղի է ունեցել հայերի տարբեր զանգվածների աստիճանական կամ միաժամանակյա ներգաղթ կամ, ինչպես շատ հետազոտողներ նշում են, հայրենադարձություն:

Սոցիալական գիտության մեջ և հայաստանյան հետազոտական դաշտում քննարկվող ու արդիական թեմաները մշտապես շոշափել են այս հարցերը, սակայն, բացի հայազգի բնակչության հոսքերից, տարբեր ժամանակներում տարբեր ինտենսիվությամբ մշտապես դիտվել է այլազգիների հոսք ևս:

14 Տաևաջյան Լ.Ա., Սիրիահայերի ինտեգրման փորձառությունը Հայաստանում. խնդիրների հաղթահարման մեխանիզմները. <https://www.osf.am/hy/programs-hy/policy-fellowship-initiative-hy/list-of-completed-projects-hy/>

Ներգաղթի հոսքերը դեպի ՀՀ

Վերջին մեկ դարում Հայաստանի համար առանձնացվում է ներգաղթի նշանակալի հոսքերի մի քանի փուլ:

Ներգաղթի առաջին ինտենսիվ փուլը սկիզբ առավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, որի հետևանքով մի քանի տասնյակ հազար ներգաղթյալ տեղափոխվեց Խորհրդային Հայաստան (մեծամասնությամբ՝ հայազգի):

Հաջորդ փուլում՝ անցած դարի 60-70-ականներին, հիմնականում նախկին Խորհրդային Միության մի շարք հանրապետություններից (գլխավորապես Ադրբեջանից և Վրաստանից) և Առաջավոր Ասիայի մի շարք երկրներից (Իրանից, Սիրիայից, Լիբանանից, Հորդանանից) տարեկան 12-14 հազար ներգաղթյալ տեղափոխվեց Հայաստան (մեծամասնությամբ՝ հայազգի):

Դեպի Հայաստան ներգաղթի երրորդ մեծ ալիքը կապված էր Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ մեր տարածաշրջանում կտրուկ սրված հակամարտության հետ, որի հետևանքով միայն 1988-1992 թթ. Հայաստանը ստիպված եղավ ընդունելու մոտ 360 հազար փախստականների Ադրբեջանից և 60.000 մեր հայրենակիցների՝ նախկին ԽՍՀՄ այլ տարածքներից (ճնշող մեծամասնությամբ՝ հայազգի):

Վերջին 10-15 տարիներին քիչ թե շատ նշանակալի ներգաղթի հոսքեր ի հայտ եկան 2003-ից հետո՝ կապված Իրաքում վարվող պատերազմական գործողությունների հետ: Հայաստանն ընդունել է Իրաքից ժամանած ավելի քան 1000 անձի, որոնք բոլորն էլ հարկադիր տեղահանվածներ էին (մեծամասնությամբ՝ հայազգի), և նրանք Հայաստանում ճանաչվեցին փախստական:

2012 թթ. սկսած՝ դեպի Հայաստան ներգաղթի հոսքերում սկսեցին գերակշռել արդեն Սիրիայից հարկադիր հեռացած անձինք: Առ այսօր Հայաստանն ընդունել է այդ երկիրը լքած շուրջ 20.000 անձանց:

2014-ից Ուկրաինայի հարավային մասում իրավիճակի սրման հետևանքով Հայաստանում ապաստանի հայց է ներկայացրել 200-ից ավելի՝ Ուկրաինայի քաղաքացի:¹⁵

2020 թ. Բեյրութի նավահանգստի պայթյունը պատճառ դարձավ դեպի Հայաստան մեծաքանակ լիբանանցիների ներհոսքի (մեծամասնությամբ՝ հայազգի):

Ահա այս մեծ փորձի հետևանքով Հայաստանը կարողացել է ինտեգրել ներգաղթյալների փոքր մասին միայն, ինչը հուշում է, որ ներգաղթյալների ինտեգրման մեխանիզմները բավարար արդյունավետ չեն գործել:

Վերջին հոսքերի մեջ թերևս արդիական և կարևոր ուսումնասիրության օբյեկտ են ՌԴ-ից ներգաղթյալները, որոնք, բացի շոշափելի քանակից, նաև ունեն ուշագրավ *ինտեգրման* դեպքեր ՀՀ-ում:

Ռուսաստանցի ներգաղթյալների փորձառությունը ՀՀ-ում

Այսպես, ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի 2022 թ. տվյալների՝ ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով Հայաստանը Ռուսաստանից ընդունել է մոտ 40.000 ներգաղթյալի¹⁶: ՀՀ ոստիկանության տվյալներով՝ 2022 թ.

15 <https://www.irtek.am/views/act.aspx?aid=86028>

16 <https://www.azatutyun.am/a/31972168.html>, oqnuunu 03, 2022

առաջին տասն ամիսների ընթացքում 19.630 անձ դիմել է Հայաստանի քաղաքացիություն ստանալու համար, որից 14.661-ը Ռուսաստանի քաղաքացիներ են: Դիմողների ճնշող մեծամասնությունը հայեր են:

Տեղափոխվածների ազգային կազմը հիմնականում ներառել է ռուսների, ուկրաինացիների, բելառուսների և որոշ այլ ազգերի ներկայացուցիչների, որոնք Հայաստան են եկել աշխատելու, ապրելու նպատակով, շատ դեպքերում՝ տեղափոխելով իրենց ֆինանսական միջոցները, կապիտալը: ՌԴ-ից Հայաստան ներգաղթը հատկապես կտրուկ աճ է գրանցել սեպտեմբերին հայտարարված ռազմական մոբիլիզացիայից հետո: Այսպիսով, Հայաստանը, ըստ էության, դարձել է այն առաջատար երկրներից, Վրաստանի հետ մեկտեղ, որն ընդունել է մեծ թվով քաղաքացիների ՌԴ-ից, որոնց հոսուն ներգաղթը շարունակվում է մինչ օրս. իհարկե, ներգաղթին զուգահեռ, առկա է նաև արտագաղթ:

Եթե քննարկենք ռուսաստանցի ներգաղթյալներին ըստ հոսքերի, ապա կարելի է ասել, որ առկա է երեք հիմնական հոսք: Առաջին հոսքը մինչև պատերազմը տեղափոխված ՌԴ քաղաքացիներն են, որի գերակշռող մեծամասնությունը ՏՏ ոլորտի մասնագետներ են: 2022 թ. հուլիսի դրությամբ Հայաստանի ՏՏ ոլորտում զբաղված է 5924 օտարերկրյա քաղաքացի, որոնցից 84%-ը կամ 4949-ը Ռուսաստանի քաղաքացիներ են: Հաջորդ հոսքը ներառում է կոնկրետ պատերազմական գործողության պատճառով տեղափոխվածներին: Այս խմբում են հատկապես մոբիլիզացիայից խուսափող անհատները: Սա ավելի բազմազան խումբ է, որը ներառում է այնպիսի մասնագիտությունների տեր մարդկանց, որոնց համար Ռուսաստանում աշխատանքը դիսկային է եղել (օրինակ՝ աշխատել իրավապահ մարմիններում կամ հատուկ ծառայություններում), կամ որոնց համար աշխատանքը ՌԴ-ում դարձել է անհնարին: Մոբիլիզացիայի հայտարարությունից ամիսներ անց Հայաստան է տեղափոխվել ներգաղթյալների երրորդ խումբը, որին այլալեզու գրականության մեջ կոչում են «early birds» (ուշացած թռչնակներ):

Այսպիսով, ՌԴ-ից տեղափոխվածների կազմը բավական բազմաշերտ և բազմապրոֆիլ է: Բացի այն, որ հոսքը ներառում է խառը ազգություններ, միաժամանակ յուրաքանչյուր խումբ անցնում է հարմարման ու *ինտեգրման*՝ իրեն հատուկ փուլերը:

Ինտեգրման ընթացքը պայմանավորող կարևոր գործոն կարելի է դիտարկել ներգաղթյալների տարաբաժանումը այլազգի և հայ խմբերի, ինչը կարևոր նախապայման է համեմատության և համադրման դիտանկյունից: Կարևոր է նշել, որ հայ ներգաղթյալները, նույնիսկ առաջին անգամ Հայաստանում լինելու պարագայում, ունեն յուրայինի զգացում՝ հիմնված ազգային պատկանելության և ինքնության վրա, և, ի տարբերություն այլազգիների, հայ ներգաղթյալների հիմնական մասն ունի բնակարանի ձեռքբերման, տեղավորման հարցերի վերաբերյալ, ինչպես նաև սոցիալական իրավիճակի մասին տեղեկատվություն ստանալու լայն հնարավորություններ՝ պայմանավորելով հարմարման առաջնային փուլի անցնցում իրականացումը:

Սակայն անկախ նշված տարաբաժանումից՝ նյութերի վերլուծությամբ պարզ է դառնում, որ հաջող *ինտեգրման* համար ՀՀ-ում առկա են մի շարք պայմաններ, որոնք պարարտ հող են ստեղծում ներգաղթյալների *ինտեգրման* համար: Ինչպես նշում են հարցազրույցի մասնակիցները՝ նմանատիպ պայմաններ

րից է մշակութային ընդհանրությունը, որը, ըստ ներգաղթյալների, պայմանավորված է ետխորհրդային անցյալով և սոցիալ-նորմատիվային մշակույթի մի շարք կանոնների ընդհանրությամբ: Սոցիալ-նորմատիվային մշակութային նմանության մասին խոսելիս՝ հատկապես շեշտադրվում են սոցիալական շփման, առօրյա կենցաղային շփումների ընդհանրությունները: Կարևորվում է նաև ընդունող հասարակության հետ կրոնական ընդհանրության առկայությունը, որը կարևոր նախապայմաններից է՝ արտագաղթի երկրի ընտրության տեսանկյունից:

Ինտելեկտուալ համար կարևորագույն պայման են դիտարկվում նաև լեզվական *խոչընդոտների* բացակայությունը և Հայաստանում (Երևանում և ՀՀ մարզերում) ռուսերենի իմացության տարածվածությունն ու դրա լայն կիրառությունը:

“Да вообще проблем особо не было. Опять же, в силу того, что Армения по большей части русскоговорящая страна, то есть большая часть населения хорошо владеет русским языком. Поэтому даже с госучреждениях проблем не возникло”¹⁷:

“Я когда приехал, я думал надо изучить как-то разговорный базовый армянский язык. Я пробовал его изучать как то через всякие самоучители и через видео на Ютуб. Но в итоге я понял, что очень многие общаются на русском. Им иной раз проще общаться с тобой на русском, чем если ты будешь общаться с ними на ломаном армянском, который ты не знаешь. Поэтому я не то, чтобы прям отбросила попытки изучить местный язык, но как то коммуникация у тебя проходит на русском. И особо проблем тоже ни с кем не было....”¹⁸

Աշխատանքային զբաղվածության տեսանկյունից ևս խնդիրները բավական սահուն են հաղթահարվել: Հարցազրույցի մասնակիցները, ներկայացնելով իրենց դեպքերը, համարում են, որ ներգաղթյալի համար ստեղծված են հարմար պայմաններ՝ աշխատանքի տեղավորման հարցում: Դա պայմանավորում են ոչ միայն լեզվական հեշտ հաղորդակցմամբ, այլև հայկական *մենթալիտետին* ծանոթ լինելու հանգամանքով: Վերջինս նաև պայմանավորված է ՌԴ-ում մեծ հայկական սփյուռքի առկայությամբ և հայերի հետ շփման լայն շրջանակներ ունենալով:

“Менталитет, он на самом деле очень похож на Армению с Россией, потому что это страна бывшего Советского Союза, и в какой то длительный период это все было одним государством. Люди общались на одном языке, одни и те же фильмы смотрели одна и та же культура была. Конечно, понятное дело, что есть особенности своей культуры. Но я не вижу какого то сильного разделения культуры Армении и России в этом плане”¹⁹:

17 Տանաջյան Լ.Ա., Ներսիսյան Ս.Ա., Հարցազրույց N 11, Երևան, 2022 թ.:

18 Տանաջյան Լ.Ա., Ներսիսյան Ս.Ա., հարցազրույց N 15, Երևան, 2022 թ.:

19 Տանաջյան Լ.Ա., Ներսիսյան Ս.Ա., հարցազրույց N 6, Երևան, 2023 թ.:

Աշխատանքային տեսանկյունից ռուսաստանցի ներգաղթյալները հիմնականում ներառվում են ՏՏ և ծառայության, ինչպես նաև ձեռնարկատիրական ոլորտում: Այսպիսով, հայ ներգաղթյալները հաճախ դառնում են կապող օղակ և միջնորդ այլազգիների համար՝ իրավական, պետական կամ սոցիալական կապերի տրամադրման և աջակցության տեսանկյունից:

Իրավական տեսանկյունից նշվում է նաև ՀՀ-ում 180 օր առանց որևէ մշտական կամ նույնիսկ ժամանակավոր կացության կարգավիճակի բնակվելու հանգամանքը, որը թույլ է տալիս առանց խոչընդոտ հաղթահարել հարմարման առաջնային փուլը: Այս պայմանը կարևոր է ներգաղթյալի համար՝ տեղեկատվություն ստանալու, սոցիալական, մշակութային, տնտեսական միջավայրին ծանոթանալու տեսանկյունից և կարող է լինել կողմնորոշիչ գործոն՝ հետագայում պլաններ գծելու համար:

Ինտեգրման համատեքստում հատկապես կարևոր են դարձել ներգաղթյալների կողմից ռուսական միջավայրերի և հարթակների ստեղծումը, միմյանց հետ շփման ապահովումը, որոնք կարևոր ցանցային մեխանիզմ են ստեղծել նրանց միջև՝ մի կողմից ամրապնդելով միմյանց հետ կապը, մյուս կողմից փակել է շղթան դեպի հայկական միջավայրեր:

Ներգաղթյալների շրջանում հատկապես ուշագրավ են տարբեր *միգրացիոն* հետագծեր ունեցող դեպքերը: Այստեղ ևս կարելի է պայմանականորեն առանձնացնել երկու հիմնական խմբի. ներգաղթյալներ, որոնք որպես առաջին երկիր մուտք են գործել ՀՀ, և ներգաղթյալներ, որոնք այլ երկիր են (մասնավորապես Վրաստանից) արտագաղթել սկզբնապես, իսկ որոշակի ժամանակահատվածից հետո միայն տեղափոխվել են ՀՀ: Վերջիններիս տեղեկատվությունից կարելի է դատել, որ Վրաստանից ՀՀ տեղափոխված ՌԴ քաղաքացիների կարծիքներում համեմատվում և հստակորեն մատնանշվում են երկու երկրներում *ինտեգրման* համար առկա հնարավորությունները: Մի դեպքում նշվում են Վրաստանում և Հայաստանում հասարակական ընկալումների տարբերությունները, որոնցում պարզորոշ է, որ հայաստանցիների ընկալումները և վերաբերմունքը ներգաղթյալների վերաբերյալ առավելապես դրական բևեռում են՝ հակառակ վրացական միջավայրի: Սակայն սոցիալ-տնտեսական հնարավորությունների և *ինտեգրման* համար առավել բարենպաստ համարում են վրացական միջավայրը:

ՀՀ-ում բնակություն հաստատելու և հետագա պլանների մասին տրված պատասխաններից կարելի է հասկանալ, որ ձևավորված հոսքի մեջ առկա են առանձին խմբեր. ա) նրանք, ովքեր դիտարկում են Հայաստանը որպես տարանցիկ երկիր և ձգտում են տեղափոխվել եվրոպական երկրներ կամ ԱՄՆ; բ) խումբ, որն ունի ՀՀ-ում հիմնած բիզնես և չի պատրաստվում լքելու երկիրը, սակայն չի ժխտում նաև ՌԴ վերադարձի հնարավորությունը՝ պատերազմական իրավիճակի թուլացմանը և կայունությանը զուգահեռ; գ) երրորդ խումբը, որ գաղափարապես և արմատապես դեմ է ՌԴ-ում ընթացող իրադարձություններին: Այսինքն՝ պատերազմը եղել է արտագաղթի մղիչ գործոն նրանց համար, սակայն ընդհանուր միջավայրին և վարվող պետական քաղաքականությանը դեմ լինելով՝ այլևս չեն պատկերացնում իրենց վերադարձը ՌԴ: Այս ներգաղթյալները որևէ տեղային կապվածություն չեն զգում ինչպես ՀՀ-ի, այնպես

էլ որևէ այլ երկրի հետ՝ համարելով իրենց «կոամոպոլիտներ»։ Իսկ ահա հայազգի ներգաղթյալների վերաբերյալ եղած տեղեկատվությունը փաստում է, որ ՀՀ-ում մնալու հավանականությունը մեծ է՝ պայմանավորված առկա կապիտալով, սոցիալական կապերով և այլ գործոններով։

Քննարկում

Առհասարակ, *իսպեգրման* տարբեր փուլերում ներգաղթյալների ունեցած խնդիրները կարելի է տեղավորել մի քանի ուղղություններով։ Առաջինը՝ իրավական խնդիրներն են, որոնք ներառում են ՀՀ սահմանադրական կարգի, պետաիրավական, քաղաքական համակարգի, մարդու և, մասնավորապես, ներգաղթյալների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ անտեղյակությունն ու դրանից բխող մի շարք խնդիրներ։ Այս համատեքստում ռուսաստանցի ներգաղթյալները դեռևս լուրջ խնդիրների չեն հանդիպել կամ հավանաբար, համարելով իրենց կացությունը ժամանակավոր, դեռևս չեն ներառվել կամ բախվել նման խնդիրների։ Երկրորդը՝ մշակութային ուղղությունն է, որը ներառում է հայաստանյան հասարակության մեջ ընդունված արժեքների, սովորույթների և վարքագծի կանոնների վերաբերյալ անտեղյակություն ու դրանից բխող մի շարք խնդիրներ։ Այս մակարդակում ևս խնդիրները հաղթահարելի են դառնում, քանի որ ունենալով համատեղ անցյալ՝ ետխորհրդային երկրներից, այդ թվում՝ ՌԴ-ից տեղափոխված ներգաղթյալները որոշակի ապահովություն են տեսնում հայաստանյան հասարակական միջավայրում։ Նրանց ճնշող մեծամասնությունը քրիստոնեություն է դավանում, իսկ լեզուն հասկանալի է տեղացիների հետ շփման համար։ *Իսպեգրման* տեսանկյունից այս խումբն ունի որոշակի առավելություններ։ Սոցիալ-տնտեսական ուղղությունը ներառում է երկրում առկա և ներգաղթյալների համար հասանելի զբաղվածության օժանդակության, կրթական, առողջապահական, սոցիալական ծրագրերի վերաբերյալ անտեղյակություն ու դրանից բխող մի շարք խնդիրներ։ Այստեղ խնդիրներն առավելապես կապված են սոցիալական ներառման հետ։ Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ ՀՀ-ում սոցիալական կապերը բավական խիտ են դասավորված և ցանկացած ոլորտում դրանց գործառնությունը ակտիվ է։ Իսկ ներգաղթյալները, չունենալով սոցիալական լայն կապեր, գոնե սկզբնական փուլում հանդիպում են խոչընդոտների, քանի որ ոչ-ֆորմալ կապերի չեն տիրապետում։ Այս սկզբունքը հավասարապես տարածվում է նաև հայ, և այլազգի ներգաղթյալների վրա, քանի որ տվյալներից պարզ է դառնում, որ այն այլազգի ներգաղթյալները, որոնք ՀՀ-ում ունեցել են կապեր մինչև տեղափոխվելը, առավելապես հաջող են կարողանում կազմակերպել իրենց առօրյան ու այլ գործողություններ։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ALBA, NEE 1997

Alba R., Nee V., Remaking the American Mainstream // Assimilation and Contemporary Immigration, England: Harvard University Press, 2003, 9-16.

BERRY 1997

Berry J.W., Immigration, acculturation, and adaptation // Applied Psychology: An International Review, 1997, 46 (1), 5-34.

BLOEMRAAD 2006

Bloemraad I., *Becoming a Citizen Incorporating Immigrants and Refugees in the United States and Canada*, University of California Press, 2006, 382 p.

CASTLES, MILLER, AMMENDOLA 2003

Castles S., Miller M.J., Ammendola G., *The Age of Migration: International Population Movements in the Modern World*, New York: The Guilford Press, 2003, 338 p.

DUSTMANN, FRATTINI 2014

Dustmann Ch., Frattini T., *The Fiscal Effects of Immigration to the UK // The Economic Journal*, 2014, Vol. 124, Issue 580, 593–643.

ESSED 1990

Essed P., *Everyday Racism: Reports from Women of Two Cultures*, Hunter House, 1990, 288 p.

JOPPKE 2007

Joppke C., *Beyond national models: Civic integration policies for immigrants in Western Europe // West European Politics*, 2007, 30 (1), 1-22.

PORTES, RUMBAUT 2001

Portes A., Rumbaut G., *Legacies: The Story of the Immigrant Second Generation*, University of California Press publisher, First Edition, 2001, 430 p.

PUTNAM 2000

Putnam R.D., *Bowling Alone: The Collapse and Revival of American Community*, New York: Simon & Schuster, 2000, 544 p.

Lusine A. Tanajyan

Ph.D

THE EXPERIENCE OF INTEGRATION OF ETHNIC ARMENIAN AND NON-ARMENIAN IMMIGRANTS IN ARMENIA: COMPARATIVE ASPECTS

Keywords: immigration, immigration, emigration, integration, adaptation, foreign, Russian immigrant, migration.

Armenia has historically been characterized by active flows of population, which broadly affect the permanent population and lead to complicated social processes. On the territory of Armenia, such flows have been both in the form of large "waves" and in the form of perpetually flowing displacements.

Over the last century, such examples include repatriation flows to Armenia, forced displacement immigration flows as a result of collapses and wars, and the small-scale but ongoing resettlement immigration that continues to the present day.

In social research, the study of Armenian immigrants is always at the center of attention, as the vast majority of immigrants are ethnic Armenians. However, along with Armenian immigrants, there has always been a flow of other-ethnic immigrants at different times with varying intensities.

In recent years, the Republic of Armenia has experienced a significant migration inflow of foreign migrants from Russia, Ukraine, and Belarus, as well as from Lebanon and other countries. By immigrating, they complement the mosaic of foreign immigrants who have already established themselves in Armenia. These changes continue to influence the current social situation in Armenia.

In the case of Armenia, these processes are significant not only from a demographic or economic investment perspective but also from a socio-cultural point of view. The aim of this paper is to show the experience of integration of foreign and Armenian (in particular, from the Russian Federation) immigrants through comparative analyses. For this purpose, the following research questions were suggested: what problems and difficulties were encountered by immigrants in Armenia, how did the adaptation processes take place, and what are the differences in the perceptions of foreign and Armenian immigrants about Armenia as a host country?

The article is based on the materials received within the framework of the project "Experience of Social Integration of Foreign Immigrants in Armenia". The research data was collected through methods of document analysis, in-depth interviews, and expert interviews.

Лусине Асатуровна Танаджян

К. И. Н

ОПЫТ ИНТЕГРАЦИИ ИММИГРАНТОВ-АРМЯН И ИММИГРАНТОВ ДРУГИХ НАЦИОНАЛЬНОСТЕЙ В АРМЕНИИ: СРАВНИТЕЛЬНЫЕ АСПЕКТЫ

Ключевые слова: иммиграция, эмиграция, интеграция, адаптация, иностранный, российский иммигрант, миграция.

Для Армении исторически характерны активные потоки населения, которые находят широкий отклик среди постоянного населения и приводят к сложным социальным процессам.

На территории Армении такие потоки происходили как в виде больших "волн", так и в виде постоянно текущих перемещений. За последнее столетие такими примерами являются потоки репатриантов в Армению, потоки вынужденно перемещенных иммигрантов в результате распадов и войн, а также маломасштабная, но продолжающаяся до сих пор переселенческая иммиграция.

В социальных исследованиях в центре внимания всегда находятся изучения армянских иммигрантов, поскольку подавляющее большинство иммигрантов составляют этнические армяне. Однако, наряду с иммигрантами-армянами всегда наблюдался поток инациональных иммигрантов, причем в разное время с разной интенсивностью. В последние годы в РА наблюдается значительный миграционный приток иностранных мигрантов из России, Украины, Беларуси, а также из Ливана и других стран.

Иммигрируя, они дополняют мозаику иностранных иммигрантов, которые уже обосновались в Армении. Эти изменения продолжают оказывать влияние на современную социальную ситуацию в Армении.

В случае с Арменией, эти процессы примечательны не только с чисто демографической или экономико-инвестиционной, но и с социально-культурной точки зрения.

Цель данной статьи - показать опыт интеграции инациональных и армянских (в частности, из РФ) иммигрантов, путем сравнительного анализа. С этой целью были выдвинуты следующие исследовательские вопросы: с какими проблемами и препятствиями столкнулись иммигранты в Армении?

Как проходили процессы адаптации? Каковы различия в представлениях инонациональных и армянских иммигрантов об Армении как о принимающей стране?

В статье использованы материалы, полученные в рамках проекта "Опыт социальной интеграции иностранных иммигрантов в Армении", исследовательские данные, которые были собраны методами анализа документов, глубинных и экспертных интервью.

Ներկայացվել է՝ 26.02.2024

գրախոսվել է՝ 19.06.2024

ընդունվել է տպագրության՝ 30.09.2024

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Աբրահամյան Հասմիկ Արելի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
hasmikabrahamyanihasc@gmail.com

Աթանեսյան Գարիկ Հրահատի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
atanesyangarik@gmail.com

Անգելուշ Լուսինե Միքայելի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ լաբորանտ

lusineangelush@gmail.com

Ասատրյան Հռիփսիմե Գարիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանագիտության բաժնի գիտաշխատող
hripetnos@mail.ru

Բարսեղյան Սյուզաննա Սոսի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

սլավոնական գիրությունների դոկտոր, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
akoonk@yahoo.com

Գալստյան Նարե Միհրանի

Սոցիոլոգիական գիրությունների թեկնածու

ԱՄՆ Սիրակուզայի համալսարանի Բերթոն Բլատի ինստիտուտի ավագ հետազոտող
nare.galstyan@gmail.com

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

սլավոնական գիրությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի*պատմական գիտությունների դոկտոր*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariam-harutyunyan-00@mail.ru

Հովսեփյան Ռոման Աղասու*կենսաբանական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
Հնակենսաբանության և էթնոկենսաբանության գ/հ խմբի ղեկավար
roman.hovsepyan@iae.am

Մարկոսյան Սալվինե Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող
salvi.markosyan@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի*պատմական գիտությունների թեկնածու*

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Մշակութային
մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող / Հայոց ազգագրության և
ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի փոխտնօրեն
svethnomuseum@yahoo.com

Վարդանյան Մակիչ Աշոտի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի ավագ
լաբորանտ
makich1639@gmail.com

Տանաջյան Լուսինե Ասատուրի

սլավոնական գիությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սփյուռքի
ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
lusine.tanajyan@gmail.com

Տիգրանյան Արմինե Հարությունի

ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դասախոս
armine.tigranyan@ysu.am

Օհանջանյան Ռուբեն Սամվելի

սլավոնական գիությունների թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական
գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

I. GLOBALIZATION AND MIGRATION PROCESSES

Mihran Galstyan

To stay or to leave? Exploring the socio-cultural issue of potential emigration from Armenia 8

Lusine Tanajyan

The experience of integration of ethnic Armenian and non-Armenian immigrants in Armenia: comparative aspects 24

Sona Nersisyan

Armenia in the perceptions of Russian immigrants 37

Syuzanna Barseghyan

Main issues of Armenia's repatriation policy in the context of contemporary realities 49

II. IMMIGRANTS AND DISPLACED PEOPLE. THE SOCIAL-CULTURAL LANDSCAPE OF ARMENIA

Gayane Hakobyan

"Aleppo market" as a micro-model of the entrepreneurial activity of Syrian-Armenians 66

Garik Atanesyan

Authenticity discourse and staged heritage in post-Soviet Armenian tourism practices 78

Armine Tigranyan

Restrictions on participation in the cultural life of violently displaced Armenians by Azerbaijan: the example of Artsakh's Hadrut region 89

III. EDUCATION AND GLOBALIZATION

Ruben Ohanjanyan

Some issues of changing trends in professional cultural values in the context of globalization in the Republic of Armenia 114

Lusine Angelush

Language policy of the Republic of Armenia in modern conditions 124

Makich Vardanyan

Globalization discourse in the Armenian mass media: the context of educational problem 139

IV. TRADITIONAL AND MODERN FACTORS IN SOCIAL-CULTURAL TRANSFORMATIONS

Svetlana Poghosyan

Clothing as a socio-psychological indicator of Soviet- and post-Soviet Armenian society 158

Hasmik Abrahamyan

Roman Hovsepyan
The ethno-cultural role of food in the cycle of migration (preliminary study based on the materials recorded in Syunik region, Armenia) 174

V. DIASPORA ISSUES

Ruben Karapetyan

The problem of involving Armenians in the community structures of the Diaspora 190

Nare Galstyan

Perceptions of homeland in the Armenian community of Los Angeles 204

Nelli Khachaturyan

Salvine Markosyan
Mariam Harutyunyan
Ethnoreligious reconversion in the context of globalization (the experience of the Indian, Turkish and Irish diasporas) 218

VI. REPORT

Hripsime Asatryan

Some modern manifestations of children's folklore 238

VII. REVIEW 248

INFORMATION ABOUT AUTHORS 263

СОДЕРЖАНИЕ

I. ГЛОБАЛИЗАЦИЯ И МИГРАЦИОННЫЕ ПРОЦЕССЫ

Мигран Галстян

Остаться или уехать? О социокультурной проблеме возможной новой эмиграции из Армении 8

Лусине Танаджян

Опыт интеграции иммигрантов-армян и иммигрантов других национальностей в Армении: сравнительные аспекты 24

Сона Нерсисян

Армения в восприятии российских иммигрантов 37

Сюзанна Барсегян

Основные проблемы политики репатриации Армении в контексте современных реалий 49

II. ИММИГРАНТЫ И ПЕРЕМЕЩЕННЫЕ ЛИЦА. СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫЙ ЛАНДШАФТ АРМЕНИИ

Гаяне Акопян

“Рынок Алеппо” как микромодель предпринимательской деятельности сирийских армян 66

Гарик Атанесян

Дискурс аутентичности и постановочное наследие в постсоветской армянской туристической практике 78

Армине Тигранян

Ограничения на участие в культурной жизни насильственно перемещенных армян из Арцаха Азербайджаном: пример Гадрута 89

III. ОБРАЗОВАНИЕ И ГЛОБАЛИЗАЦИЯ

Рубен Оганджян

Некоторые вопросы тенденций изменения профессиональных культурных ценностей в условиях глобализации в Республике Армения 114

Лусине Ангелуш

Языковая политика Республики Армения в современных условиях 124

Макич Варданян

Дискурс глобализации в армянских СМИ: контекст проблемы образования 139

IV. ТРАДИЦИОННОЕ И СОВРЕМЕННОЕ В СОЦИАЛЬНО-КУЛЬТУРНЫХ ТРАНСФОРМАЦИЯХ

Светлана Погосян

Одежда как социально-психологический показатель советско- и пост-советско-армянского общества 158

Асмик Абрамян

Роман Овсепян
Этнокультурная роль пищи в круговороте миграции (по материалам Сюникской области) 174

V. ПРОБЛЕМЫ ДΙΑСПОРЫ

Рубен Карапетян

Проблема вовлечения армян в общинные структуры Диаспоры 190

Наре Галстян

Представления о родине в армянской общине Лос-Анджелеса 204

Нелли Хачатурян

Сальвине Маркосян
Мариам Арутюнян
Этнорелигиозная реконверсия в условиях глобализации (на опыте индийской, турецкой и ирландской диаспор) 218

VI. СООБЩЕНИЕ

Рипсима Асатрян

Некоторые современные проявления детского фольклора 238

VII. РЕЦЕНЗИЯ

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

248
263

ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
6

անգլերենի խմբագիրներ՝	Գարիկ Աթանեսյան Արման Խաչատյան
ռուսերենի խմբագիրներ՝	Լիլյա Վարդանյան Լուսինե Անգելուշ
հայերենի խմբագիր՝	Սեդա Քուփեյյան
ձևավորում և էջադրում՝	Արտակ Հարությունյան

